ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՓՄՀ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29

ք. Երևան «09» օգոստոսի 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԱՍԻՍ» ԱԿ-ն, ի դեմս նախագահ Վ. Ալոյանի, որը գործում է ԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կառույցների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2018 թվականի հոկտեմբերի 25-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 3.1 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 28 950 000 (քսանութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Շինարարության ընթացքում կիրառվող բոլոր նյութերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	«ՄԱՍԻՍ» ԱԿ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	Ք.Աբովյան, Սարալանջի 12/39
Կոնսերվատորիայի ԲԲԸ	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 19300597578700200	Հ/Հ 1150046108750
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 03501664
Տնօրեն Ստեփան Թորոսյան	Նախագահ Ա. Ալոյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված թիվ 1
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՀ-ՋԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղական համայնքում գիտական և արկածային զբոսաշրջության կենտրոնի շինության կառուցման աշխատանքների կատարման

Հազ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Ընդամենը
	1-Հիմքեր				
1	Խամքար բետոնե հիմքի իրականացում ՀՀ1,2 հիմնային հեծանների տակ B-12,5 դասի բետոնից	մ³	36.50	44.01	1606.44
2	Որմնախարիսխի բետոնե պատերի իրականացում B-15դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ³	12.00	59.38	712.56
3	Ե/բ ՀՀ-1,2հիմնային հեծանների իրականացում B-20դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ³	28.20	85.67	2416.02
4	8Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.85	529.48	450.59
5	18A-500c դասի ամրանի արժեքը	տ	1.43	517.00	739.83
6	Ուղղահայաց ջրամեկուսացում տաք բիտումե մաստիկով երկշերտ	100մ²	0.56	98.09	54.93
Ընդամենը					5980.37
	2-Պատեր				
1	Որմնախարիսխի երեսապատում 30մմ հաստ բազալտե սալիկներով 7,7-(0,08*7), 0,15-(0,005*7), 10,2-(0,15*7),/ներառյալ աստիճանների և թեքահարթակների կողային մասերը/	մ²	23.20	24.21	561.77
2	Ցանցի ձգում պատերի վրա Ց-1	տ	0.10	527.49	51.69
3	Պատերի երեսապատման տեղական քարե սալիկներով, հաստ 30մմ 5,8-(0,06*7), 0,13-(0,005*7), 8,9-(0,11*7),	մ²	30.16	16.64	501.84
4	Ցանցի ձգում պատերի վրա Ց-1	տ	0.10	527.49	54.86
5	Պատուհանագոգերի իրականացում 40մմ հաստ բազալտե սալերով	մ²	2.01	15.52	31.20
6	Արտաքին պատեր շարք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ³	52.80	23.62	1247.33
7	Փրփրապլաստի տեղադրում սեյսմիկ կարերում 10սմ հաստ	մ³	0.43	48.42	20.82
8	Շարվածքի ամրանավորում ցանցով 5Վ՝1	տ	0.16	593.58	92.01

9	Շրջանակ Ա.Բ,Գ առանցքով[a] Ս-1,2,3 միաձույլ ե/բ սյուների իրականացում B-20 դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ³	11.00	107.92	1187.17
10	8Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.39	529.48	205.65
11	18A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.83	517.00	430.66
12	20A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.54	517.00	281.25
13	Միջադիր էլեմենտների տեղադրում ՄՆ-1	տ	0.09	1001.06	85.57
14	Շրջանակ Ա.Բ,Գ առանցքով[a] Պ-1,2, միաձույլ ե/բ պարզունակների իրականացում B-20 դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ³	13.35	92.75	1238.20
15	8Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.62	529.48	328.81
16	12A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.01	517.31	7.66
17	18A-500c դասի ամրանի արժեքը	տ	1.17	517.00	603.34
18	20A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.08	517.00	42.55
19	22A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.10	517.00	51.49
20	Միջադիր էլեմենտների տեղադրում ՄՆ-1	տ	0.07	1001.06	71.28
21	Շրջանակ 1,2,3,4 առանցքով՝ Պ-1,2, միաձույլ ե/բ պարզունակների իրականացում B-20 դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ³	13.60	92.48	1257.72
22	8Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.68	522.83	357.09
23	18A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.58	510.49	296.60
24	20A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.79	510.49	404.82
25	Միջադիր էլեմենտների տեղադրում ՄՆ-1	տ	0.04	991.97	42.38
26	Երեսապատման քարերի մեջ վերտիկալ անցքերի բացում ալմաստե գայլիկոնով d=12մմ-20մմ	100հատ	10.00	17.26	172.56
27	Անցքերի ներարկում պոլիմեր - ցեմենտե շաղախով	մ³	0.01	78.55	0.79
Ընդամենը					9627.08
	3.Ծածկեր				
1	Միաձույլ ե/բ ծածկի սալի իրականացում B-20դասի բետոնից +2,9,+5,95 նիշերի վրա պլաստիֆիկատորով	մ³	30.60	79.36	2428.35
2	10A-500c դասի ամրանի արժեքը	տ	3.70	531.35	1963.35
3	Ե/բ հեծանների պատրաստում B-20դասի բետոնից Հ-1պլաստիֆիկատորով	մ³	3.80	90.94	345.57
4	8Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.09	529.48	49.98
5	18A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.24	517.00	123.98
Ընդամենը					4911.23
	4.Աստիճաններ				
1	Միաձույլ աստիճանների իրականացում B-20դասի բետոնից ԱԱՀ-1 պլաստիֆիկատորով	մ³	6.80	100.67	684.56
2	6Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.06	529.48	31.03
3	12A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.19	517.31	97.87
4	16A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.43	515.74	223.52

5	Մետաղական բազրիքների տեղադրում h=90սմ	100գծմ	0.46	226.40	103.24
6	խողովակ 50*2,5	գծմ	87.40	2.13	186.27
7	խողովակ 20*2	գծմ	224.40	0.69	155.58
8	Աստիճանաքայլերի և աստիճանահարթակի պատում բազալտից սալիկներով 30մմ հաստ.	մ²	18.90	16.50	311.81
9	Շրիշակների իրականացում բազալտե սալիկներով H-100մմ	100գծմ	0.20	106.49	21.51
10	Մետաղական բազրիքների յուղաներկում	100մ²	0.41	112.14	45.99
Ընդամենը					1861.39
	5.Տանիք				
1	Պողպատե էլեմենտներից /ուղղանկյուն խողովակներ,ներդիր էլեմենտներ,պահանգներ,ձգաններ, ձեղնահարկի լուսամուտներ /տանիքի կարկասի մոնտաժում	տ	4.99	70.81	353.33
2	Ուղղանկյուն խողովակ 80*3մմ	գծմ	18.00	4.29	77.19
3	Ուղղանկյուն խողովակ 120*60*4մմ	գծմ	233.00	6.43	1498.73
4	Ուղղանկյուն խողովակ 60*30*2,5մմ	գծմ	552.00	1.80	992.20
5	Շերտապողպատ -80*4մմ	մ²	21.60	19.98	431.51
6	Անկյունակ 63*5մմ	գծմ	150.00	3.24	485.31
7	Ներդիր էլեմենտ	տ	0.18	727.35	130.92
8	Մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ	տ	4.99	19.76	98.60
9	Ցեմ.ավազե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստ	100մ²	1.44	102.65	147.81
10	Գոլոշամեկուսացման իրականացում իզոգամով բիտումի քսուկի վրա, 1 շերտ	100մ²	1.44	253.89	365.60
11	Ծածկի ջերմամեկուսացում խարամով, 15սմ հաստութ.	մ³	21.60	8.15	176.10
12	Տանիքի ծածկի իրականացում ցինկապատ փոշեներկված կղմինդրով 0,5մմ հաստ,	100մ²	2.01	689.83	1386.55
13	Ձեղնահարկի ցինկապատ փոշեներկված թիթեղ0,5մմ հաստ	մ²	11.00	4.12	45.33
14	Պիպ ցինկապատ փոշեներկված 0,5մմ հաստ	գծմ	38.00	4.75	180.52
15	Գախովի ջրահեռացման առուների պատրաստում ցինկապատ փոշեներկված 0,5մմ հաստ կիսակլոր D=160մմ թիթեղից	100գծմ	0.51	264.56	134.93
16	Ձագար ցինկապատ փոշեներկված 0,5մմ հաստ թիթեղից	հատ	4.00	3.58	14.33
17	Ուղղանկյուն ցինկապատ փոշեներկված 0,5մմ հաստ թիթեղից ջրատար խողովակ 100*100մմ	գծմ	43.00	2.67	114.83
18	Արմունկ ցինկապատ փոշեներկված 0,5մմ հաստ թիթեղից	հատ	4.00	1.51	6.06
19	Խողովակավոր ձյունապաշտպան	գծմ	43.00	4.28	183.84
20	Մետաղական հակահրդեհային եյարանի տեղադրում	տ	0.12	165.66	20.21
21	Մետաղական սանդուղքների արժեքը	տ	0.12	722.77	88.18
Ընդամենը					6932.08

6.Միջնորմներ					
1	Թեթև բետոնե սալերից միջնորմների իրականացում 90սմ հաստ	100մ^2	1.29	378.34	488.06
2	Անցքերի լցափակում թեթև բետոնով B 15դասի	մ^3	1.70	41.51	70.56
3	Միջադիր էլեմենտների տեղադրում /8A-500c -105կգ,10A-500c -181կգ դասի ամրաններ,տաշտապողպատ 10 227,5կգ/	տ	0.41	1001.06	409.43
4	Փրփրապլաստ 2սմ հաստ	մ^3	0.42	14.98	6.29
5	Ե/բ բարավորների իրականացում B15դասի բետոնով պլաստիֆիկատորով	մ^3	0.33	95.30	31.45
6	6Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.01	529.48	5.40
7	12A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.03	517.31	17.07
Ընդամենը					1028.27
7.Պատուհաններ					
1	Մետաղապլաստե շականակագույն պատուհաններ երկտակ ապակեփաթեթով,ջերմակամրջակով բացվող բարդ փականով /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/ լավորակ	մ^2	12.83	59.29	760.70
2	Մետաղապլաստե շականակագույն պատուհաններ երկտակ ապակեփաթեթով,ջերմակամրջակով չբացվող /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/ լավորակ	մ^2	6.75	32.38	218.56
3	Միջադների դեմ ցանց 6հատ	մ^2	6.75	3.93	26.52
4	Պլաստմասից պատուհանագոգեր 25սմ լայնութ	մ^2	16.70	6.47	108.06
Ընդամենը					1113.84
8.Ցուցափեղկեր					
1	Մետաղապլաստե ցուցափեղկեր երկտակ ապակեփաթեթով, բացվող ջերմակամրջակով /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	մ^2	9.45	45.57	430.59
2	Մետաղապլաստե ցուցափեղկեր երկտակ ապակեփաթեթով, չբացվող ջերմակամրջակով /ներառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	մ^2	21.35	32.38	691.31
3	ՄԴՖ-ից պատրաստված էկրանի տեղադրում ալյումինե շրջանակներով /ալյումինե անկյունակ Լ20*2մմ լ-8,1գծ.մ,ալյումինե խողովակ d-50մմ լ-50գծ.մ/ տեղադրում արգելափակիչների հետ միասին	մ^2	5.40	29.97	161.82
Ընդամենը					1283.72
9.Դռներ					

1	Մետաղապլաստե շականակագույն դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/ լավորակ արտերկիր	մ²	4.50	53.47	240.63
2	Մետաղապլաստե շականակագույն դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/ լավորակ արտերկիր	մ²	11.34	53.47	606.40
3	Մետաղապլաստե շականակագույն դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/ լավորակ արտերկիր առանց շեմի	մ²	11.76	53.47	628.86
4	Մետաղապլաստե շականակագույն խուլ դռների տեղադրում ջերմակամրջակով 60մմ պրոֆիլով /տեղադրումը,տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/ լավորակ արտերկիր առանց շեմի	մ²	2.25	53.47	120.32
5	ՄԴՖ-ով երեսապատած, դռների տեղադրում արգելափակիչների հետ միասին	մ²	3.15	75.87	238.98
Ընդամենը					1835.19
10. Արտաքին ջրամատակարարում					
1	Ավազից նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ.	մ³	1.60	8.24	13.19
2	Ավազից պաշտպանիչ շերտի իրականացում խողովակի վրա .	մ³	3.60	8.24	29.67
3	Պողպատե եռակցվող խողովակների տեղադրում d=50*4մմ	գծմ	26.00	6.83	177.59
4	Պողպատե փական d=40մմ	հատ	1.00	12.22	12.22
5	Ջրաչափ d=40մմ	հատ	1.00	39.61	39.61
6	Ֆիլտր d=40մմ	հատ	1.00	10.71	10.71
7	Պլիմերավազային ջրմուղդիտահորեր մոնտաժում D=900մմ h-1մ	հատ	0.28	16.42	4.65
8	Բետոնե շերտի իրականասում B-12,5 դասի բետոնից	մ³	0.40	49.93	19.97
9	Ե/բ ծածկի սալի դիտահորի վրա	մ³	0.20	82.41	16.48
10	Դիտահորի պոլիմերավազային կափարիչներ D=700մմ	հատ	1.00	48.45	48.45
11	Համակարգի լվացում աղտահանում	գծմ	26.00	3.58	93.13
Ընդամենը					465.68
11. Արտաքին կոյուղի					
1	Ավազից նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ.	մ³	1.60	5.76	9.22

2	Ավազից պաշտպանիչ շերտ խողովակի վրա իրականացում	մ³	3.60	5.76	20.75
3	Պլիմերավազային կոյուղու դիտահորեր մոնտաժում D=900մմ h-1մ	մ³	0.57	138.17	78.76
4	Ե/բ ծածկի սալի դիտահորի վրա	մ³	1.00	82.95	82.95
5	Մաքրմա կայանի ե/բ կլոր դիտահորեր մոնտաժում D=900մմ h-1մ	մ³	0.28	153.94	43.56
6	Ե/բ ծածկի սալի դիտահորի վրա	մ³	0.20	82.95	16.59
7	Դիտահորի բետոնե առվակի պատրաստում B-15դասի բետոնից	մ³	1.00	48.24	48.24
8	Մաքրման կայանի տակ բետոնե հարթակի պատրաստում B-10դասի բետոնից	մ³	1.00	49.78	49.78
9	Լոկալ մաքրման կայան <Topaz-30>	հատ	1.00	4000.00	4000.00
10	Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D=160մմ	գծմ	36.00	2.49	89.67
11	Պոլիվինիլքլորիդե խողովակների տեղադրում D=110մմ	գծմ	3.00	2.49	7.47
12	Դիտահորի պոլիմեավազային կափարիչներ D=700մմ	հատ	2.00	47.44	94.88
13	Խողովակի միացում գոյություն ունեցող գծին D=160մմ	տեղ	1.00	26.91	26.91
Ընդամենը					4568.79
ԸՆԴԱՆՈՒՐԸ					39607.63
ԱԱՀ 20%					7921.53
ԱՄԲՈՂՋԸ					47529.15

* Կապալառուն աշխատանքները կատարում է Գեղարքունիքի մարզ, գ. Կալավան, 7-րդ փող., 3-րդ հողամաս հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
հշ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԱՍԻՍ» ԱԿ
Ք.Աբովյան, Սարալանջի 12/39
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
ՀՎՀՀ 15004610875
03501664
Նախագահ Վ. Ալոյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՀ-ՋԱԿ-ԳՀԱՇՀԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղական համայնքում գիտական և արկածային զբոսաշրջության կենտրոնի շինության կառուցման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	13. 08. 2018
2	Հիմքերի կառուցում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	24. 08. 2018
3	1-ին հարկի երկաթբետոնե կմախքի, ծածկերի կառուցում	24. 08. 2018	17. 09. 2018
4	2-րդ հարկի երկաթբետոնե կմախքի, ծածկերի կառուցում	17. 09. 2018	30. 09. 2018
5	Աստիճանների կառուցում	24. 08. 2018	17. 09. 2018
6	Տանիքի կառուցում	30. 09. 2018	25. 10. 2018
7	1-ին հարկի պատերի և միջնորմների կառուցում	24. 09. 2018	04. 10. 2018
8	2-ին հարկի պատերի և միջնորմների կառուցում	07. 10. 2018	15. 10. 2018
9	1-ին հարկի դռների, լուսամուտների և ցուցափեղկերի տեղադրում	04. 10. 2018	09. 10. 2018
10	2-ին հարկի դռների, լուսամուտների և ցուցափեղկերի տեղադրում	15. 10. 2018	20. 10. 2018
11	Արտաքին ջրամատակարարման անցկացում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	24. 08. 2018
12	Արտաքին կոյուղու կառուցում	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	24. 08. 2018
ԸՆԴԱՄԵՆԸ		**Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը**	**25. 10. 2018**

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> պունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 19300597678780200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Մ.Գրիգորյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԱՍԻՍ» ԱԿ
Ք.Արովյան, Սարալանջի 12/39
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610875
ՀՎՀՀ 03501664
Նախագահ՝ Կ.Ալոյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221139	կառույցների կառուցման աշխատանքներ	8685000	20265000	28 950 000	28 950 000	28 950 000	28 950 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԱՍԻՍ» ԱԿ
Ք.Արովյան, Սարալանջի 12/39
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 115004610875
ՄԱՐԶ ՀՎՀՀ 03501664
Նախագահ՝ Վ. Ալոյան

/ստորագրություն/

Հավելված 3.1
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՁ-ՁԱԳ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կալավան գյուղական համայնքում գիտական և արկածային զբոսաշրջության կենտրոնի շինության առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները

N ը/կ	Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի անվանումները	երաշխիքային ժամկետներ	
		Սկիզբը	Ավարտը
1	Հիմքեր	Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրը	Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը
2	1-ին և 2-րդ հարկերի երկաթբետոնե կմախքներ ու ծածկեր		
3	Աստիճաններ		
4	Տանիք		
5	Պատեր և միջնորմներ		
6	Դռներ, լուսամուտներ և ցուցափեղկեր		
8	Արտաքին ջրամատակարարում		
9	Արտաքին կոյուղի		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
Կոնվերսբանկ ԲԲԸ
Հ/Հ 1930059757870200
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԱՍԻՍ» ԱԿ
Ք.Աբովյան, Սարալանջի 12/39
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Մ/Հ 21115004610875
ՀՎՀՀ 03501664
Նախագահ Ս. Ալոյան
/ստորագրություն/

Հավելված թիվ 4
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՀ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«09» օգոստոսի 2018թ. կնքված
ՓՄՀ-ԶԱԿ-ԳՀԱՇՁԲ-2018/29 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն